



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական յործ ԸԻԴ N 0042/01/14

Քրեական յործ ԸԻԴ N 0042/01/14

Նախա՝ահող դատավոր՝ Հ. Աբրահամյան
Դատավորներ՝ Ն. Գրիգորյան
Կ. Մաղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

10-ին նոյեմբերի 2014թ.

ԼՂՀ Գերա՝ույն դատարանը (այսուհետ՝ Գերա՝ույն դատարան) վճռաբեկության կար՝ով.

նախա՝ահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Ա. Հայրապետյանի
Ի. Կարապետյանի
Գ. Արզումանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ մեղադրանքի Արարատ Բահատուրի Խաչատրյանի՝ նախատեսված ԼՂՀ քրեական օրենս՝րքի 269-րդ հոդվածի 2-րդ մասով, քրեական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թ. սեպտեմբերի 18-ի որոշման դեմ ԼՂՀ Գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Գործի դատավարական նախապատմությունը.

2014 թվականի մարտի 5-ին ԼՂՀ ոստիկանության ՔՎ Շուշիի շրջանի քննչական խմբի ավագ քննիչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Դ. Հովսեփյանի կողմից ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 171008.14 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ որպես մեղադրյալ ներգրավելու և խափանման միջոց ընտրելու մասին 2014 թվականի մարտի 19-ի որոշումներով Արարատ Բահատուրի Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, նրան մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

հանցագործություն կատարելու համար, և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննության մարմնի 2014 թվականի մարտի 24-ի որոշմամբ Մհեր Այոզայի Նարինյանը ճանաչվել է տուժող:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ 2014 թվականի ապրիլի 1-ին ուղարկվել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան/:

Առաջին ատյանի դատարանի /դատավոր՝ Կ. Ղահրամանյան/ 2014 թվականի հունիսի 30-ի դատավճռով Արարատ Բահատուրի Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 1 /մեկ/ տարի ժամկետով: Դատարանը վճռել է կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 /երկու/ տարի ժամկետով:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան/ /նախագահող դատավոր՝ Հ. Աբրահամյան, դատավորներ՝ Ն. Գրիգորյան, Կ. Սադյան/, ամբաստանյալ Ա. Խաչատրյանի և նրա պաշտպան Ռ. Ավանեսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը, 2014 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 30-ի դատավճիռն ամբողջությամբ բեկանել է, Արարատ Բահատուրի Խաչատրյանի արարքը որակել ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով և գործի վարույթը կարճել ու քրեական հետապնդումը դադարեցրել՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

Նշված որոշման դեմ ԼՂՀ Գլխավոր դատախազը 2014 թվականի հոկտեմբերի 10-ին բերել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ամբաստանյալ Արարատ Բահատուրի Խաչատրյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա 2014 թվականի փետրվարի 14-ին, ժամը 18.00-ի սահմաններում, գտնվելով ալկոհոլային խմիչքների ազդեցության տակ, ներկայանալով Մարտունի քաղաքի Կարվին թաղամասում տեղակայված բազմաբնակարան շենքերի մերձակա տարածք, այնտեղ չնչին առիթով վիճաբանության մեջ է մտել նույն թաղամասի բնակիչ Մհեր Այոզայի Նարինյանի հետ, որի ընթացում շուրջ 15 րոպե տևողությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության և ակնհայտ արհամարհական վերաբերմունք ընդունված բարոյական ու իրավական նորմերի նկատմամբ, իր շուրջը հավաքված թաղամասի բնակիչների ներկայությամբ բարձրաձայն անցենգուր հայհոյանքներ արտահայտելով, հարվածներ հասցնելու միջոցով բռնություն է գործադրել Մ.Ա. Նարինյանի նկատմամբ՝ այդ կերպ խաթարելով շրջակայքում գտնվող անձանց հանգիստը:

Անձի սթափության վիճակի գննության թիվ 19 առ 14.02.2014թ. արձանագրության համաձայն՝ Արարատ Բահատուրի Խաչատրյանը նույն օրը ժամը 19:45-ի սահմաններում գտնվել է ծանր աստիճանի հարբածության վիճակում /հատոր 1, գ.թ.8/:

Նախաքննության մարմնի առ 22.03.2014թ. արարքին իրավական գնահատական տալու մասին որոշման համաձայն՝ որոշվել է Մ.Նարինյանի նկատմամբ խուլիգանության, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու և ծեծի փաստերով քրեական հետապնդում չիրականացնել և քրեական գործի մասը կարճել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով /հատոր 1, գ.թ.83-88/:

Նախաքննության և դատաքննության ընթացքում ամբաստանյալ Ա.Խաչատրյանին իրեն մեղավոր չի ճանաչել, սակայն չի ժխտել հարվածներ հասցնելու, հայիոյանքներ տալու և հավաքված անձանց կողմից իր գործողությունները կանխելու փաստերը:

Առաջին ատյանի դատարանը դատավճռում նշել է, որ «չնայած ամբաստանյալ Ա.Բ.Խաչատրյանը առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, նրա մեղքը կատարված հանցագործության մեջ հաստատվում է տուժողի և վկաների ցուցմունքներով, առերես հարցաքննության արձանագրություններով, դեպքի վայրի զննության արձանագրությամբ, ինչպես նաև գործով ձեռք բերված այլ բավարար փաստացի տվյալներով»:

Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Ա.Խաչատրյանի արարքում բացակայում են ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի որևէ մասով նախատեսված որևէ հանցակազմի հատկանիշներ: Տուժողի և վկաների ցուցմունքներից հետևում է, որ Արարատ Խաչատրյանի և Մհեր Նարինյանի միջև տեղի է ունեցել միմյանց հասցեագրված անցենգուր հայիոյանքներով համեմված վիճաբանություն, որի ընթացքում նրանք փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց: Այսինքն, ... Ա. Խաչատրյանի բարձրաձայն հայիոյանք տալու և բռնություն գործադրելու ձևով կատարված գործողություններն ուղղված են եղել կոնկրետ տուժող Մ.Նարինյանին և չեն հետապնդել հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ: Եվ վերաորակելով ամբաստանյալի արարքը ԼՂՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասից նույն օրենսգրքի 117-րդ հոդվածով, գործի վարույթը կարճել ու քրեական հետապնդումը դադարեցրել է՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

Նախկինում՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013թ. նոյեմբերի 11-ի դատավճռով Արարատ Բահատուրի Խաչատրյանը մեղավոր էր ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով /խուլիգանությունը, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով և հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով/, և նրա նկատմամբ նշանակվել էր տուգանք՝ 250000 ՀՀ դրամի չափով /հատոր 1, գ.թ.137-138/:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

1/Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել նյութական իրավունքի նորմերը, ինչն արտահայտվել է նրանում, որ Ա.Խաչատրյանի հանցավոր արարքը սխալ որակելով, Վերաքննիչ դատարանը ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասի փոխարեն կիրառել է նույն օրենսգրքի 117-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Գործի նյութերից երևում է, որ Ա. Խաչատրյանը 2013թ. նոյեմբերի 11-ին ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցավոր արարք կատարելու համար դատապարտվել էր տուգանքի 250000 ՀՀ դրամի չափով: 2014թ. փետրվարի 14-ին, ժամը 14-ի սահմաններում Ա. Խաչատրյանն իրենց թաղամասի երիտասարդների կազմակերպած հացկերույթին մասնակցելու համար գնացել է թաղամասի երկու բազմաբնակարան շենքերի կողքին գտնվող՝ տուժող Մ. Նարինյանի բանջարանոցը և Մ. Նարինյանի ու մի քանի երիտասարդների հետ սկսել քեֆ անել: Քեֆի ժամանակ ակոնհոլային խմիչքներ օգտագործելուց հետո Ա. Խաչատրյանն սկսել է ակնարկներ անել 2013թ. իր կողմից կազմակերպված հրդեհի մասին, որի մարմանը մասնակցել էր նաև Մ. Նարինյանը՝ հանդիսանալով հրշեջ խմբի անդամ: Մ. Նարինյանը դրան ուշադրություն չի դարձրել, որից հետո քեֆն իր հունով շարունակվել է: Քեֆն ավարտելուց հետո բոլորը ցրվել են: Դրանից մի քանի րոպե անց, Ա. Խաչատրյանը, որն արդեն գտնվում էր ծանր աստիճանի ակոնհոլային հարբածության վիճակում, նորից ներկայացել է նույն տարածք, ոտքով հարվածել սեղանին, այնուհետև ոտքով հարվածել բանջարանոցի փայտե դռանը, ջարդել այն ու մյուս կողմից դուրս եկել: Տուժող Մ. Նարինյանը, իր բնակարանի պատուհանից տեսնելով այդ ամենը, շտապ դուրս է եկել, գնացել Ա. Խաչատրյանի ուղղությամբ ու հարցրել նրան, թե ինչու է ջարդել իր բանջարանոցի դուռը, ինչին ամբաստանյալ Ա. Խաչատրյանը պատասխանել է, որ լավ է արել, ու անցնելու արտահայտությունների ուղեկցությամբ սկսել քաշքշել Մ. Նարինյանին, հարված հասցրել, ինչին վերջինս նույն կերպ պատասխանել է: Նրանց ձայների վրա այնտեղ են հավաքվել մարդիկ՝ շուրջ 15 հոգի: Վեճակո՞ղիվր տևել է շուրջ 15-20 րոպե: Դրանից հետո նրանց շուրջը հավաքված մարդկանց դժվարությամբ է հաջողվել անջատել նրանց, սակայն նույնիսկ դրանից հետո ամբաստանյալը շարունակել է հավաքվածների /այդ թվում՝ կանանց/ ներկայությամբ գոռգոռալով անցնելու արտահայտություններ անել:

Մեջբերելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի բովանդակությունը, մեկնաբանելով ու վերլուծելով այն, բողոքաբերը գտնում է, որ ամբաստանյալ Ա. Խաչատրյանին առաջադրված մեղադրանքը նախաքննության և դատաքննության ընթացքում գործով ձեռք բերված ապացույցներով՝ ամբաստանյալ Ա. Խաչատրյանի, տուժող Մ. Նարինյանի ցուցմունքներով, նրանց առերես հարցաքննության ժամանակ տված ցուցմունքներով, վկաներ Հ. Դանիելյանի, Ս. Հովսեփյանի, Ն. Նարինյանի, Ա. Միրզոյանի, Ռ. Հովսեփյանի ցուցմունքներով, ակոնհոլային հարբածության աստիճանի ստուգման արձանագրություններով, հաստատվել է: Բողոքաբերի կարծիքով՝ գործի նյութերի, այդ թվում՝ վկաների ցուցմունքների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ամբաստանյալի գործողությունները հենց սկզբից ուղղված էին ոչ թե կոնկրետ որևէ անձի, այլ հասարակության ու դրանում ընդունված համակեցության կանոնների, բարոյականության նորմերի դեմ և միայն հետո, երբ Մ. Նարինյանը «ձեռքի տակ է ընկել», իր անձի առավելություններն ընդգծելու մոլուցքին շատ պատեհ կերպով միացել է իրեն ինչ-ինչ պատճառներով դուր չեկած կամ չհամակրած Մ. Նարինյանին «գուզահեռաբար» ֆիզիկական և բարոյական վնաս պատճառելու, նրան՝ որպես հասարակության մի անդամի հենց հասարակության ներկայությամբ ստորացնելու ցանկությունը: Եվ պատահական չէ, որ վեճակո՞ղի ձայների վրա հավաքված թաղամասի բազմաթիվ բնակիչների, այդ թվում նաև կանանց ներկայությամբ, նա շարունակել է գոռալով հայհոյանքներ տալ ու հարվածներ հասցնել: Ավելին՝ նրան և Մ. Նարինյանին իրարից բաժանել ցանկացողներին չենթարկվելով՝ վեճակո՞ղիվր շարունակվել է:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, դատաքննության ժամանակ արված ամբաստանյալի վերացական դատողությունները, թե իբր իր և տուժողի «գերդաստանների առուն մի ճանապարհով չի գնում» և տուժողի ենթադրությունը, որ «իր կարծիքով 2013թ. հրդեհի դեպքի կապակցությամբ ամբաստանյալը քեն է պահել», որպես թույլատրելի ապացույցներ է համարել և որոշման հիմքում դնելով, դրանց առավելություն է տվել թույլատրելի մի շարք ապացույցների նկատմամբ:

2/ Վերաքննիչ դատարանը խախտել է քրեադատավարական իրավունքի նորմերը, այն է՝ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 113-րդ, 114-րդ, 134-րդ, 136-րդ, 137-րդ հոդվածների, 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

ա/ ապացույցները պետք է պարունակեն ոչ թե գնահատողական դատողություններ, կարծիքներ, այլ կոնկրետ փաստական տվյալներ որոշակի գործողությունների, իրադարձությունների վերաբերյալ, բ/ այդ փաստական տվյալները պետք է ձեռք բերվեն օրենքով նշված աղբյուրներից և վերաբերվեն կոնկրետ տվյալ գործին և ապացուցման առարկային, գ/ ապացույցները պետք է ձեռք բերվեն, ամրագրվեն և օգտագործվեն քրեադատավարական օրենքով սահմանված կարգով:

Ըստ բողոքի՝ գործի նյութերից երևում է, որ նախաքննության ընթացքում ամբաստանյալ Ա.Խաչատրյանը ոչ մի անգամ չի հիշատակել իր կողմից տուժող Մ.Նարինյանի հանդեպ ունեցած վեճի, հակակրանքի մասին, նշելով, որ նրա հետ ունի նորմալ հարաբերություններ, և միայն դեպքից ավելի քան չորս ամիս անց դատաքննության միջնամասում պաշտպանության կողմը շրջանառության մեջ է դրել Մ.Նարինյանի հետ Ա.Խաչատրյանի անբարյացակամ հարաբերությունների, նրա հանդեպ ունեցած հակակրանքի մասին վարկածը՝ ակնհայտորեն նպատակ հետապնդելով փաստերը խեղաթուրել: Վերաքննիչ դատարանը պարտավոր էր ապացույցները գնահատելիս համապատասխան որոշմամբ պատճառաբանված եզրահանգումներ անել, թե ինչու որոշ ապացույցներ դրվել են որոշման հիմքում, իսկ մյուսները՝ որպես ոչ հավաստի, մերժվել, ինչով կկանխվեր ապացույցների կանխակալ մոտեցում ցուցաբերելու, դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տալու անթույլատրելիության մասին օրենքի պահանջների խախտումները:

Վերաքննիչ դատարանի կողմից ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտման մասին պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է ԼՂՀ Գերագույն դատարանի 2012թ. նոյեմբերի 30-ի՝ ԸԻԴ 0042/01/12 քրեական գործով որոշումը, որում արտահայտվել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...արարքը խուլիզանություն կարող է որակվել նաև այն դեպքերում, երբ անձի մոտ առկա են հանցանքի կատարման այլ դրդումներ, սակայն հանցանքի կատարման ընթացքում ձևավորվում են խուլիզանական դրդումներ, այլ խոսքով՝ արարքը կվերաճի խուլիզանության»: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր առաջնորդվել ԼՂՀ Գերագույն դատարանի վերոնշված գործով արված իրավական մեկնաբանություններով և Ա. Խաչատրյանի՝ իբր այլ դրդումներով սկսված ու հետագայում հասարակական կարգի կոպիտ խախտման վերածված հանցանքը որակել որպես խուլիզանություն, կամ էլ ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորել, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Ըստ բողոքի՝ անհիմն է Վերաքննիչ դատարանի հետևությունը՝ նախաքննության մարմնի կողմից քրեադատավարական նորմերի խախտման մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Ըստ Վերաքննիչ դատարանի որոշման՝ հետաքննության մարմինը հանցագործության մասին հաղորդումն ընդունելով՝ քրեական գործ է հարուցել 19 օր անց, այդ կերպ թույլ տալով քրեադատավարական նորմի խախտում, որը հիմք ընդունելով, Վերաքննիչ դատարանն այդ ժամանակահատվածի ընթացքում ձեռք բերված բոլոր ապացույցները գնահատել է որպես անթույլատրելի, քանի որ ձեռք են բերվել օրենքի խախտմամբ, ու գտել, որ պետք է արգելվի դրանց օգտագործումը: Մինչդեռ ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերի վերլուծությունից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, և քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման ժամանակ թույլ տրված քրեադատավարական օրենսդրության խախտումները պետք է գնահատվեն՝ ելնելով դրանց բնույթից, ծանրությունից և վերոնշյալ գործողությունների արդյունքում ստացված ապացուցողական նյութի որակի և հավաստիության վրա դրանց ազդեցության աստիճանից:

Ամփոփելով վերոգրյալը՝ բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ՝ արտահայտված նյութական և դատավարական իրավունքի կոպիտ խախտումներով, որն առաջացրել է ծանր հետևանքներ, քանի որ հանցանք կատարած անձն ազատվել է քրեական պատասխանատվությունից: Բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Բացի այդ՝ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Գերագույն դատարանի կողմից նախկինում ընդունված որոշմանը:

Ելնելով վերոշարադրյալից՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի հունիսի 30-ի դատավճռին:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ բողոքը հիմնավոր է ու ենթակա է բավարարման, իսկ որոշումը՝ բեկանման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաձայն սկզբունքներին և նորմերին համապատասխան: ԼՂՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

Հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունները ոտնձգում են հասարակության անդամների միջև գոյություն ունեցող փոխադարձ հարգանքի, պատվի, արժանապատվության, ազատության, անձնական անձեռնմխելիության և այլ արժեքների պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Խուլիզանությունը շարունակում է մնալ որպես հասարակական կարգի, քաղաքացիների անդորրը խաթարող վտանգավոր հանցագործություն, որը հաճախ հանգեցնում է այլ՝ ավելի ծանր հանցագործությունների կատարմանը:

Սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում Գերագույն դատարանի առջև բարձրացված խնդիրը ԼՂՀ քրեական օրենսգրքի 7-րդ բաժնում ընդգրկված մարդու դեմ ուղղված հանցագործությունների /այդ թվում մասնավոր հետապնդման գործերով/ և նույն օրենսգրքի 9-րդ բաժնում նախատեսված հասարակական անվտանգության..., մասնավորապես հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների /այն է՝ խուլիզանության/ տարանջատման պարզումն է: Այդ հարցի պարզաբանումը հնարավորություն կտա գնահատել սույն գործով ստորադաս դատարանների իրարամերժ դիրքորոշումները և պատասխանել այն հարցին, թե իրավացիորեն է Վերաքննիչ դատարանը բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, որակելով ամբաստանյալ Ա.Խաչատրյանի արարքները ոչ թե ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասով, այլ նույն օրենսգրքի 117-րդ հոդվածով, և հիմնավոր են արդյոք վճռաբեկ բողոքի փաստարկները՝ Վերաքննիչ դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման մասին:

Սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է Գերագույն դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 1-ին մասը խուլիզանություն է համարում դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում նույն արարքի համար, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով ...:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածը սահմանում է քրեական պատասխանատվություն ծեծելու կամ այլ բռնի գործողություն կատարելու համար, որը չի առաջացրել նույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ /այսինքն՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս չի պատճառվել/:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ խուլիզանությունը հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն է, որի հիմնական, անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են հասարակական կարգի բովանդակությունը, իսկ պարտադիր լրացուցիչ օբյեկտն անձի անձեռնմխելիության, պատվի և արժանապատվության, առողջության, քաղաքացիների և կազմակերպությունների գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Խուլիզանության հիմնական հանցակազմի անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են նեղ իմաստով հասարակական կարգի բովանդակությունը:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ արարքը ենթակա է որակման որպես խուլիզանություն միայն այն դեպքում, երբ կհիմնավորվի հասարակական կարգի խախտման կոպիտ լինելը և միաժամանակ, հասարակության նկատմամբ այդ խախտմամբ արտահայտված անհարգալից վերաբերմունքի բացահայտ լինելը:

Կոպիտ խախտումը՝ որպես խուլիգանության հանցակազմի հատկանիշ, բնութագրական է հասարակական կարգի կազմալուծման կամ խախտման գործընթացի արդյունքներին: Այն արտահայտվում է նրանում, որ անձի կատարած գործողությունների հետևանքով հասարակության անդամների մեջ առաջանում է զայրույթ, վրդովմունք, կամ նրանց անհարմարություն կամ լուրջ անհանգստություն է պատճառվում, կամ առաջանում է վախի զգացում իրենց կյանքի, առողջության, գույքի պահպանության կապակցությամբ: Բացի այդ, կոպիտ խախտումն արտահայտվում է նաև աշխատանքային և այլ գործունեության կամ հասարակական նշանակության արարողության կազմալուծմամբ: Յուրաքանչյուր դեպքում արարքը խուլիգանությունն որակելու համար, ի թիվս այլ հանգամանքների, անհրաժեշտ է քննության առնել նաև այն, թե արդյոք այդ արարքի հետևանքով հասարակության անդամներին լուրջ անհանգստություն է պատճառվել:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմի մեկնաբանման համար էական նշանակություն ունի նաև «բացահայտ անհարգալից վերաբերմունք» հասկացության պարզաբանումը: Բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորումն արտահայտվում է մարդկային համակեցության կանոնների նկատմամբ ակնհայտ արհամարհանք դրսևորելու, հասարակական վայրերում վարքագծի կանոնները ցուցադրական կերպով անտեսելու, շրջապատի մարդկանց և կոլեկտիվին հակադրվելու ձևով: Հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորման եղանակները տարբեր են՝ արարք, խոսք, ժեստ, մարմնաշարժում և այլն:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ արարքը խուլիգանությունն որակելու համար էական նշանակություն ունի դրա բնույթն ու կատարման շարժառիթը:

Անձի նկատմամբ բռնության գործադրումը դրսևորվում է հարվածելով, ծեծով, առողջությանը վնաս հասցնելով:

Խուլիգանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Դա նշանակում է, որ մեղավոր անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հանրության հանդեպ, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները: Խուլիգանական արարքը կարող է կատարվել միայն խուլիգանական դրդումներից ելնելով: Խուլիգանական դրդումների հիմքում ընկած են նաև անձի անգուսպ եսամոլությունը, սեփական անձի առավելությունն ընդգծելու միջոցով ներքին բավականություն ստանալու, զվարճանալու ձգտումը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ հանցավոր անձի մտքերը, դրդումները արտահայտվում են գործողություններով, և միայն կատարված գործողություններով է հնարավոր գնահատել անձի իրական դրդումները, շարժառիթները: Խուլիգանական գործողությունները շատ դեպքերում կատարվում են հարբածության հողի վրա, ինչը չի նվազեցնում պատասխանատվությունը կատարած արարքների համար:

Ինչպես հետևում է գործի նյութերից, Առաջին աստիճանի դատարանի դատաքննության ընթացքում հաստատվել է, որ 2014 թ. փետրվարի 14-ին ժամը 18-ի սահմաններում ԼՂՀ Մարտունի քաղաքի Կարվին թաղամասում տեղակայված բազմաբնակարան շենքերի մերձակա տարածքում ակոնոլային խմիչքների ազդեցության տակ գտնվող Ա.Խաչատրյանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել 15-30 րոպե տևողությամբ /իսկ ըստ մեղադրական եզրակացության՝ 15 րոպե

տևողությամբ/ վիճաբանություն, որի ընթացքում Ա.Խաչատրյանը բարձրաձայն անցենգուր հայիոյանքներ արտահայտելով, հարվածներ հասցնելով Մ.Նարինյանին, իր շուրջը հավաքված թաղամասի բնակիչների ներկայությամբ շարունակելով բարձրաձայն անցենգուր հայիոյանքներ արտահայտելը, չենթարկվելով հավաքված բնակիչների՝ իրենց բաժանելու ջանքերին /նշված հատկանիշը բացակայում է մեղադրանքում/, խանգարել է շրջակայքում գտնվող մարդկանց հանգիստը:

Ամբաստանյալ Ա. Խաչատրյանը նախաքննության և դատաքննության ընթացքում տված ցուցմունքներով հաստատել է տեղի ունեցածը, սակայն չհամաձայնվելով մեղադրանքին՝ առաջին հարվածը իր կողմից հասցված լինելու մասով, պատճառաբանել է, որ իրեն առաջինը հարվածել է Մ.Նարինյանը և որ վեճակո՞ւր եղել է փոխադարձ:

Վերաքննիչ դատարանը, ճիշտ քրեաիրավական վերլուծության ենթարկելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածը, սակայն չանդրադառնալով նախաքննության և դատաքննության ընթացքում գործով ձեռք բերված բոլոր ապացույցներին /այն է՝ տուժող Մ.Նարինյանի, վկաներ Հ.Դանիելյանի, Ս.Հովսեփյանի, Ն.Նարինյանի, Ռ.Հովսեփյանի, Ա.Միրզոյանի ցուցմունքներին և այլ ապացույցներին/, առանց վերլուծելու գործի հանգամանքները, հիմք ընդունելով միայն ամբաստանյալի և տուժողի դատաքննության ընթացքում արտահայտած կարծիքները, հանգել է սխալ եզրակացության, որ Ա. Խաչատրյանի՝ բարձրաձայն հայիոյանքներ տալու և բռնություն գործադրելու ձևով կատարված գործողություններն ուղղված են եղել կոնկրետ տուժող Մ.Նարինյանին և չեն հետապնդել հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Առաջին ատյանի դատարանը առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Ա.Խաչատրյանի մեղքը հաստատված է համարել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված ապացույցների շարքին դասվող՝ նախաքննության և դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով և գնահատել ամբաստանյալի փաստարկները որպես առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու, քրեական պատասխանատվությունից խուսափելու միջոց: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալի նշված գործողությունները որակելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, որը պատասխանատվություն է սահմանում ծեծելու կամ այլ բռնի գործողություններ կատարելու համար, և որի հանցակազմից դուրս է հասարակության անդամների ներկայությամբ բարձրաձայն անցենգուր հայիոյանքներ տալը, հարբածության վիճակում թաղամասում կռիվ անելը, մարդկանց հանգիստը խանգարելը, մարդկանց մեջ տագնապի, վախի զգացումներ առաջացնելը, որևէ գնահատական չի տվել ամբաստանյալի նշված գործողություններին, և արդյունքում պետության կողմից մնացել են չերաշխավորված հասարակության անդամների իրավունքները: Ծեծի կամ բռնի գործողությունների կատարման դեպքում /որոնք դասվում են առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքին/ հենց կոնկրետ մարդն է դառնում հանրորեն վտանգավոր ոտնձգության գլխավոր և հիմնական օբյեկտը, իսկ խուլիզանությունը տարբերվում է անձնական դրդումներով կատարված հանցագործություններից հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորմամբ:

Ելնելով վերը շարադրված պատճառաբանություններից, Գերագույն դատարանը հիմնավոր է համարում բողոքի փաստարկները՝ Վերաքննիչ դատարանի կողմից

նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման մասին: Գերագույն դատարանի նման եզրահանգումը բխում է նաև ստորև շարադրված քրեադատավարական նորմերի վերլուծությունից:

Ապացույցների հասկացությունը սահմանող ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Քրեական դատավարությունում ապացուցման գործընթացը նախատեսված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-137-րդ հոդվածներով, որոնք սահմանում են ապացույցներ հավաքելը, դրանց ստուգումը և գնահատումը:

Այսպես, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է: Նույն օրենսգրքի 135-րդ հոդվածը սահմանում է, որ ապացույցները հավաքվում են հետաքննության, նախաքննության և դատական քննության ընթացքում...:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից: Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, ի խախտումն վերը նշված նորմերի պահանջների, վերաքննիչ բողոքի սահմաններում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործի նյութերը, ոչ ճիշտ գնահատական է տվել ամբաստանյալի արարքներին և անհիմն բեկանել Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը:

Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել, որ Վերաքննիչ դատարանի հետևությունը՝ մինչդատական վարույթի ընթացքում թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի մի շարք խախտումների հետևանքով որոշ ապացույցների օգտագործման արգելքի մասին, անհիմն է, չի բխում ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Ինչ վերաբերում է բողոքի փաստարկին այն մասին, որ Վերաքննիչ դատարանը, ի խախտումն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների, որոնք սահմանում են որոշակի փաստական հանգամանքներ ունեցող

գործով Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումների, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունների, պարտադիրությունը դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ, անտեսել է Գերագույն դատարանի թիվ 0042/01/12 քրեական գործով 2012թ. նոյեմբերի 30-ի որոշման մեջ արտահայտված դիրքորոշումը, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքում չի հիմնավորվել նշված փաստարկը: Բացի այդ, նշված գործերով փաստական հանգամանքները նույնանման չեն:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ վճռաբեկության կարգով գործը քննելիս նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հարցի լուծման ընթացքում Գերագույն դատարանը ղեկավարվում է նույն օրենսգրքի 415-րդ և 416-րդ հոդվածների կանոններով:

Բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը ամրագրված են ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝ 1/ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին, 2/ ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը, 3/ առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում, 4/ դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական օրենքի ...ոչ ճիշտ կիրառումը քրեական օրենքի...այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման, կամ այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումն է, որը ենթակա էր կիրառման, կամ քրեական օրենքի...սխալ մեկնաբանումն է, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը օրինական և հիմնավորված է, կայացվել է օրենսգրքի պահանջների պահպանմամբ, դրա հետևությունները հիմնված են դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտմամբ, ուստի այն ենթակա է բեկանման:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Գերագույն դատարանի լիազորությունը և բեկանել Վերաքննիչ դատարանի 2014թ. սեպտեմբերի 18-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի 2014թ. հունիսի 30-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-440-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ Գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը բավարարել: Արարատ Բահատուրի Խաչատրյանի վերաբերյալ ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի հունիսի 30-ի դատավճռին:

2. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴՍՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**